

ԳՊՐԱՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ ՊԵՏԻ Է ՀԱՄԱՁ-
ԳԱՅԻՆ ԼԻՆԻ

Հայ գրերի գիւտի և հայ տպագրութեան
յօրելեանը յաւերժացնելու նպատակով Ա.
մենայն Հայոց Կաթողիկոսը որոշել է հիմնել
դպրոցական ֆօնդ:

Եղիշէ աւ. քահ. Գեղամեան «Հովիտ» շա-
բաթաթերթի մէջ (№ 42) խօսելով «Մշա-
կի» № 234-ում տպւած «Մեսրոպեան լու-
մայ» իմ յօդուածի մասին, որի մէջ այն
միտքն է յայտնւած, թէ դպրոցական ֆօն-
դից պէտք է օգտվեն Թիւրքիայի և Պարս-
կաստանի հայ դպրոցներն ևս, հարց է տա-
լիս, թէ «ո՞վ որոշեց և երբ, որ դպրոցական
ֆօնդը այժմեանից միջազգային ընտանոց-
ութիւն ստանայ»:

Նախ, ոչ ոք չէ որոշել, որ դպրոցական
ֆօնդը միջազգային լինի Այդպիսի բան
ոչ ոքի մտքից չէ անցել: Անշուշտ, հայր
Գեղամեան կամ սխալվել է, կամ չէ հաս-
կանում միջազգային խօսքի նշանակութիւ-
նը: Երևի նա կամեցել է ասել համազգային,
իսկ միջազգային և համազգային բառերը
բաւական տարբեր են իրարից:

Մինք առաջարկել ենք և առաջարկում
ենք, որ դպրոցական ֆօնդը լինի համազ-
գային այն պատճառով, որ 1) ինքն էջ-
միածնի Յօրել. Յանձնաժողովը ծրագրել է
համազգային դպրոցական ֆօնդ, ինչպէս
տպւած է «Արարատի» մէջ և Կաթողիկոսն
ևս հաստատել է այդ որոշումը. 2) յօրելեա-
նը լինելով համազգային, նրան յաւեր-
ժացնող ակտն ևս պէտք է լինի համազ-
գային:

Հայր Գեղամեան թէև այնպէս է ցոյց
տալիս, որ ինքն հակառակ չէ համազգային
դպրոցական ֆօնդին և իբրև տպացոյց ա-
ռաջ է բերում այն հանգամանքը, որ 1881
թ. ի վեր Միացեալ Ըսկերութեան պատուա-
ւոր անդամն է, բայց գործնականին մէջ
նա իր այդպիսի կասկածներով ջլատում է
ջանքերն այն մարդկանց, որոնք աշխատում
են յօգուտ Թիւրքահայերի դպրոցական
գործի:

Ապա հ. Գեղամեան մեզ համար բոլորո-
վին անակնկալ մի յայտնագործութիւն ևս
անում է:

Յիշացնելով, որ 1884 թ. մենք մի բրօ-
շուրով յորդորում էինք հայ հարուստներին
գնել Գ. Արծրունու քարվանսարան և նուր-
բիլ էջմիածնին, Ներսէս Վարժապետեանի
կաթողիկոս ընտրվելու առիթով, նա ասում
է, թէ իբր այդ մեր առաջարկը պատճառ
դարձաւ Ներսէս պատրիարքի մահը փու-
թացնելուն: Առաջին անգամն ենք լսում
այդպիսի բան: Նախ, Գր. Արծրունու քար-
վանսարան, որ այժմ ծառայում է վրացի-
ների համար եկամտի ահազին աղբիւր և
արժէ միլիօններ, 1884 թ., երբ մենք յոր-
դորում էինք հայ հարուստներին գնել և
նուրբիլ էջմիածնին կուլտուրական նպա-
տակների համար, կարելի էր ազատել ա-
նուրդից ոչ թէ 600,000 ռ. տալով, ինչպէս
հ. Գեղամեանն է ասում, այլ միայն մօտ
50,000 ռ. տալով: Հայ հարուստները խնա-
յեցին այդ շնչին գումարը և միլիօններ ար-
ժող կալուածքը ընկաւ օտարների ձեռքը:
Երկրորդ, մենք չենք կարողանում հասկա-
նալ, ինչու այդ քարվանսարան աճրդից ա-
զատելը և էջմիածնին նուրբիլը կարող էր
արագացնել Ներսէս Վարժապետեանի մահը:

Արդեօք սա էլ մինը չէ այն բաղերից,
որ հ. Գեղամեանը մի քանի ժամանակից ի
վեր նոյն «Հովիտի» մէջ ներկայացնում է
«Շնորհաւորանք» դիմակի տակ «Մշակի» և
Գր. Արծրունու դէմ: Հ. Ա.